Ձեր 27.05.2011թ. N15/15.4/8711-1 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ա.Բաբայան

Ատոմ Զանջուղազյան

N034/16625-11
 01.06.11թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

21.8/7

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

2-06-11թ N 77/22/4864-11

Ձեր N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 27.05.2011թ. թիվ 15/15.4/8711-11 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

???? 2011 12:53 PM

Հ. ԲՈՒՇԿՅԱՆ

Կապարդու Ա. Մկրտչյան
հեռախոս 52 27 21

N 020/16710-11
2-06-11թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER

21.8/7

ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Տեղ./Tel.: 58 03 02, ֆաքս/ֆակс/ fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07-1/5634-11 30-05-2011

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի մարտի 27-ի № 15/15.4/8711-11 գրության, հայտնում եմ, որ «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Մ.ՄՎԻՏՅԱՆ

Կապ. Ն.Սահակյան
հեռ. 524777

N 031/16253-11
30.05-11թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆՔԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Մ. Բ / 7


ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

N ՉԻՇԻՅ-6/3595-11
2-06-11թ

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Սույն թվականի մայիսի 27-ի թիվ 15/15.4/8711-11 գրությամբ Ձեր կողմից կարծիքի ներկայացված «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան ծրագիր «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով, որտեղ նկարագրվում են ծրագրի նպատակները, նախատեսվող միջոցառումները, նշվում են դրանց կատարողներն ու ստացողները, կանխատեսվող մուտքերի և ծախսերի նախահաշիվը ինչպես նաև ծրագրի իրականացման փուլերը և ժամկետները:

 Ա. ԱՆԱԿԵՐԴՅԱՆ

Կապարող Մ. Շահնազարյան
Միջազգային հարաբերությունների բաժին, հեռ.՝ 594 649

N 044/16641-11
2-06-11թ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտարկությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
<p>Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում են, որ անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան ծրագիր «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով, որտեղ նկարագրվում են ծրագրի նպատակները, նախատեսվող միջոցառումները, նշվում են դրանց կատարողներն ու ստացողները, կանխատեսվող մուտքերի և ծախսերի նախահաշիվը ինչպես նաև ծրագրի իրականացման փուլերը և ժամկետները:</p>	<p>Հայաստանի Հանրապետության կառավարության առկայությունը պետական նկատման կողմից</p> <p>Կազմակերպությունը ներկայացրել է բեռի ծրագիրը և ցանկը (ցցվում են):</p>

Մ. Բ / 7

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Շ ՈՒ Մ

_____ հունիսի 2011 թվականի N Կ-
քաղ. երևան

- Ա 21.8/8

ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ «ՄԱՅՐ
ԱԹՈՒԻ ԿԱԹՍԱՅԱՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունիսի -ի N 3/3.8-1/78233-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի հունիսի -ի N 2526-11, և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունիսի -ի N ԱԱ/3-4/2689 -11 եզրակացությունները,
ո ղ ո շ ու մ է.

1. Բարեգործական որակելի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 16 000.000 դրամ արժողությամբ «Մայր Աթոռի կաթսայատան վերանորոգման» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (<ՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեկուսիչ» ԱԿ-ի հետ (<< Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար, ՀՎՀՀ՝ 04701782) 2011 թվականի մայիսի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կաթսայատան երեք կաթսաների վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 16 000.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի

21.8/8

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՑՈՒՄ
ՄԱՅՐ ԱՅԹՈՒ ՄԻՈՒԿԱՅԻՆ ԴԻՎԱՆԱՊԵՏ
ՏՄԱՐԱԿ ԿԻՆՍՏԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԻՏԵ
2011 թ.
21-8/8

Մայր Աթոռի կաթսայատան վերանորոգման
ԾՐԱԳԻՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

21-8/8

1	Ծրագրի նպատակը	Մայր Աթոռի կաթսայատան երեք կաթսաների վերանորոգում
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՀ ԳՀ 04703401
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ք.Վաղարշապատ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածք
6	Ծրագրի բյուջեն	16 000 000 ՀՀ դրամ:
7	Բարեգործություն ստացողը	Մայր Աթոռը, Մայր Աթոռի միաբանությունը և աշխատակիցները:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	15 հունիսի 2011թ. – 31 դեկտեմբերի 2011թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռի կաթսայատան երեք կաթսաների վերանորոգում՝ 16 000 000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Վերանորոգման աշխատանքներն իրականացվում են «Մեկուսիչ» ԱԿ-ի կողմից (ՀՀ, Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար, ՀՀ ԳՀ 04701782), պայմանագիր կնքված 03.05.2011թ.:
10	Չեղք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է Մայր Աթոռի կաթսայատան երեք կաթսաների վերանորոգում՝ 16 000 000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Արմավիրի մարզպետարանի հետ և Վաղարշապատ քաղաքի քաղաքապետարանի հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

№ _____

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 30.05.11թ. N 15/15.8/8790-11 գրության՝ կապված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մայր Աթոռի կաթսայատան վերանորոգման» ծրագրի մասին «Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ծրագրի 8-րդ և 10-րդ կետերում առկա է ժամկետային անհամապատասխանություն:

Հարգանքով

Կ. Ե. Ե.

Ատոմ Զանցուղազյան

Վարչատնտեսական բաժնի տնօրեն՝

Տ.Մուշեղ վարդապետ Բաբայան

Տ. Մուշեղ վարդապետ Բաբայան

Ֆինանսական բաժնի տնօրեն՝

Մարինե Ղազարյան

Մարինե Ղազարյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

ՁԸ 8/8

N: 3258-11
01.06.2011թ.

0078 Երևան, Հայաբլուզի 41", հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

**Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. մայիսի
30-ի 15/15.8/8790-11 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մայր Աթոռի կաթսայատան վերանորոգման» ծրագրի 8-րդ և 10-րդ կետերի միջև առկա է հակասություն, մասնավորապես, 8-րդ կետով ծրագրի իրականացման տևողությունը վերաբերում է 2011թ. հունիսի 15-ից-2011թ. դեկտեմբերի 31-ը ներառող ժամանակահատվածին, մինչդեռ 10-րդ կետով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կաթսայատան երեք կաթսաների վերանորոգում և սպասարկում հետագա 5 տարիների ընթացքում՝ 16 000 000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Նկատի ունենալով առկա հակասությունը՝ առաջարկում ենք հստակ սահմանել ծրագրի իրականացման տևողությունը:

Հարգանքով՝

Գ. Մուրադյան

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Ա. Մկրտչյան, հեռ. 380-227

035/16456-11
01.06.2011թ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

ՁԸ 8/8

0015, Երևան, Մ. Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

N: ՉԿՉ/3-4/3624-11
02.06.2011թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 30.05.2011թ. թիվ 15/15.8/8790-11 գրությանը կից ներկայացված «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մայր Աթոռի կաթսայատան վերանորոգման» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ավազյան

Անողակի հարկերի բաժին, հեռ.594652

044/16763-11
2.06.2011թ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մայր Աթոռի կաթսայատան վերանորոգման» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

<p>Դիտողության կամ առաջարկության բավանդակությունը</p>	<p>Հիմնավորում</p>
<p>ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ - 8-րդ և 10-րդ կետերում առկա է ժամկետային անհամապատասխանություն: ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ - ծրագրի 8-րդ և 10-րդ կետերի միջև առկա է հակասություն, մասնավորապես, 8-րդ կետով ծրագրի իրականացման տևողությունը վերաբերում է 2011թ. հունիսի 15-ից-2011թ. դեկտեմբերի 31-ը ներառող ժամանակահատվածին, մինչդեռ 10-րդ կետով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կաթսայատան երեք կաթսաների վերանորոգում և սպասարկում հետագա 5 տարիների ընթացքում՝ 16 000 000 ՀՀ դրամ գումարով առանց ԱԱՀ: Սկսածի ունենալով առկա հակասությունը՝ առաջարկում ենք հստակ սահմանել ծրագրի իրականացման տևողությունը:</p>	<p>Դիտողությունը հաշվի է առնվել, ծրագիրը լրանվակվել է:</p>

Մ. 8/8.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

___ հունիսի 2011 թվականի N Մ-
բաղ. երևան

-Ա

Մ. 8/9.1

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՂՄԻՆԹՈՒՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒՇՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայասրանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայասրանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունիսի -ի N 3/3.8-2/-11, Հայասրանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2011 թվականի հունիսի -ի N 1/06/-11 ու Հայասրանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունիսի -ի N ԱԱ/3-6/-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է:**

1. Բարեգործական որակել Եվրոպայի բաղմինթոնի կոնֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի բաղմինթոնի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված 100 տուփ բաղմինթոնի փետրազնդակի (մեկ տեղ, 12 կգ ընդհանուր քաշով, 25 Եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 160 Եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի բաղմինթոնի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Մ. 8 / 9.1

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

10.06.2011թ. № 3/3.8-2/80142-11

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 08.06.2011թ. N15/15.6/9521-11 գրությամբ ներկայացված «Հայաստանի բաղմինթոնի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/17767-11
10.06.2011թ.



Մ. 8 / 9.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

09 06 2011 թ. N 1/06/577-11

Ձեր 2011 թ. հունիսի 8-ի N 15/15.6/9521-11 գրության

☒ ՀՀ, Երևան-0001, Արուսյան 9
☎ 52-86-01
հեռապատճեն՝ 52-99-28, 52-88-77
էլ. փոստ՝ msy@msy.am

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստանի բաղմինթոնի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացած բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը առաջարկություններ և դիտողություններ չունի:

Հարգանքով՝

Ա. Պելերոսյան

Կատարող՝ սպորտի բարձրագույն նվաճումների
բաղաճականության վարչություն
Ս. Հարությունյան, հեռ.՝ 52-99-79

022/17564-11
09.06.2011թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 21-8/9.1

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

№: Չ.Ա./3-6/3983-11

14.06.2011թ.

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Սույն թվականի հունիսի 8-ի թիվ 15/15.6/9521-11 գրությամբ Ձեր կողմից
կարծիքի ներկայացված «Հայաստանի բաղմինթոնի ֆեդերացիա» հասարակական
կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման
նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա.ԱՆԱՎԵՐԴՅԱՆ

Կարարող Մ.Շահնազարյան
Միջազգային հարաբերությունների բաժին, հեռ.՝ 594 649

044/18052-11

14.06.2011թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2011 թվականի N Մ-
քաղ. Երևան

-Ա 21-8/9.2

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱ-
ԴՐԱՄ»-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11, Հայաստանի
Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011
թվականի -ի N ՖՔ/ԱնՄ-1/ -11 ու Հայաստանի Հանրապետության կառավարության
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունիսի -ի N ԱԱ/3-6/ -11
եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Ամերիկայի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից
«Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ստացված
օգտագործված կահույքի (185 տեղ, 7022 կգ ընդհանուր քաշով, 56377 ԱՄՆ-ի դոլար
արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 7500 ԱՄՆ-ի դոլար, բեռի ցանկը
կցվում է, «Արարտյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը
նախատեսված է ասանհատույց հանձնելու Լեոնային Ղարաբաղի Հանրապետության
Քաշաթաղի սոցիալական ապահովության վարչությանը՝ շրջանի բազմազավակ և
անապահով ընտանիքներին հատկացնելու համար:

2. «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ին՝ նշված բեռի
բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարու-
թյուն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի
Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների
կոմիտե:

ՁԻՑ/Ց.2

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» անունով «Հայկական միացյալ հիմնադրամի» կողմից ուղարկված 185 տեղ 7022 կգ բրուտտո քաշով և 56 377 ԱՄՆ դոլար

արժողությամբ

(Ճանապարհածախսը 7500 ԱՄՆ դոլար) բեռի բաշխման

ՑԱՆԿ

h/h	Ապրանքի անվանումը	տեղ	քաշ բրուտտո կգ	արժեք \$	հատ	ԼՂԴՔաշաթաղի շրջանի սոցապ վարչություն
1.	Գրապահարաններ, զրատախտակ	14	286	3262		14
2.	Հատակի գրապահարաններ	14	508	4340		14
3.	Աթոռներ, գրասեղան	39	531	10 296		39
4.	Աթոռներ, բազկաթոռ	4	181	1272		4
5.	3 հոգանոց բազմոց	1	93	595		1
6.	Գրասեղաններ, մնջարան	22	1387	10 010		22
7.	Հագուստի պահարան, մնջարան	34	2005	13 022		34
8.	խոհանոցային տեխնիկա, փոքր սառնարան	17	810	1700		17
9.	Ներքնակներ, մնջարան	38	1189	11 400		38
10	Սեղաններ	2	32	480		2
	Ընդամենը	185	7022	56 377		



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԼԱՌԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՁԻՑ/Ց.2

«16» 06 2011 թ.

ՆԳՔ/ՍԶ.Դ-Տ/- 5226-11

Ձևը 2011-06-14, 15/15.1/9856-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի»-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքներով՝

S. Aghajanyan Տ. Բերիկյան

040/18372-11

Կառավարության Միջազգային կապերի բաժին հեռ.56-34-91



ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ԸՆԹ. 8/9.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ԱԿ/3-6/4060-11

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2011 թվականի N Մ-
քաղ. Երևան

-Ա ԸՆԹ. 8/9.3

16.06.11


ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

«ՖՐԱՆՍԻԱՅԻ ԲՈՂՈՋԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ
ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՆՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունիսի 8-ի N 3/3.8-2/80014-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հունիսի 7-ի N ՀԲ/22/5004-11, Հայաստանի Հանրապետության աշխարհային և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի հունիսի 6-ի N ՖԲ/ԱնԱ-5/4856-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի հունիսի 6-ի N 03/07-1/5925-11, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունիսի 8-ի N ԱԱ/3-6/3770-11, Երևանի քաղաքապետի 2011 թվականի հունիսի 10-ի N 02/34-17691-հ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի հունիսի 7-ի N 01/2664-1, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2011 թվականի հունիսի 9-ի N 1/31-1/2518-11, եզրակացությունները, որոնցում է,

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,
Ձեր ս/թ. հունիսի 14-ի համար 15/15.1/9856-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

1. Բարեգործական որակել «Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության Գյումրու մասնաճյուղի հասցեով՝ անհատ բարերար Ֆերդինանդ Գրասյանի կողմից նվիրաբերված բեռի՝ (551 տոն, 27180 կգ ընդհանուր քաշով, 6000 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 5000 ԱՄՆ դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Շիրակի» Տ/Մ) ներմուծման ծրագիրը:
2. «Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության Գյումրու մասնաճյուղին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության ՀՀ սպորտի և երիտասարդության հացերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին ու Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին:

 Ա. ԱԼԱԿԵՐԴՅԱՆ

044/18285-11

կադրող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

«Ֆրանսիայի բաղադրական նվերներ և Նայատանի միջև համադրություն» բարեգ. կազմ. Գյումրու մասնաճյուղի տնօրեն Արսև խաչատրյանի կողմից

15.06.2011թ.

21-8/9.3

Հումամիտար բեռի բաշխման ցուցակ

№	Ապրանքի անվանումը	տեղ	Սետ տու բաշք կգ	Բրուտո քաշը կգ	Քանակ	Սրժեքը /դրամ/
1	Բժշկական շտատիվ կաթիլային մեդալկոնների	33	99	99	33 հատ	ա/ 9908 բ/ 7621 գ/ 7621 դ/ 12591
2	ձանկաբարձական սեղան	1	10	12	1 հատ	4544
3	բանվորական շապիկ	1	15	17	35 հատ	4544
4	բանվորական կոշիկ	1	7	8	5 ցույց	4544
5	օգտագործված քրաչափեր	6	3480	3780	2900 հատ	1014486
6	նոր քրաչափեր	1	325	355	270 հատ	94451
7	յուղամեղ	4	2947	3224	131 հատ	ա/ 40247 բ/ 214850 գ/ 13416 դ/ 26831 ե/ 26831 զ/ 33137 է/ 26831 յ/ 13416
8	հարթեղող ցեմենտ	4	4200	4280	168 հատ	ա/ 52620 բ/ 32887 գ/ 190747
9	լինոլեում	291	1310 2	13312	4820մ ²	ա/ 333899 բ/ 116865 գ/ 33390 դ/ 200349

21-8/9.3

10.	շոիշակ	187	1296	1583	9055 գճճ	ե/ SPFA-ի ակունքներ - 200 մ ² զ/ ԼՂՀ, Ալյեբրանի շրջանի, Խնձապատ համայնքի երաժշտական դպրոց - 300 մ ² է/ ԼՂՀ, Զաղրուբի շրջանի, Կարմիրակուչ համայնքի դպրոց - 400 մ ² ը/ Գյումրիի «Մեղվիկ» կենտրոն - 770 մ ² թ/ Գյումրիի ֆուտոն վարժարան - 600 մ ² ժ/ Երևանի թիվ 2 հատուկ (օժանդակ) դպրոց - 200 մ ² ի/ Զանգրապ, թիվ 1 հատուկ կրթահամալիր - 200 մ ² լ/ կրտաշատի քաղաքային արտադր. կենտրոն - 100 մ ² ա/ Գյումրիի Ընտանիք կենտրոն - 3000 գճճ բ/ Գյումրիի Սամարիթեր հիվանդանոց - 400 գճճ գ/ Գյումրիի Իճֆեկցիոն հիվանդանոց - 200 գճճ դ/ Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ - 1000 գճճ ե/ Գյումրիի «Մեղվիկ» կենտրոն - 2000գճճ զ/ Գյումրիի ֆուտոն վարժարան - 1000 գճճ է/ Երևանի թիվ 2 հատուկ (օժանդակ) դպրոց - 400գճճ ը/ Զանգրապ, թիվ 1 հատուկ կրթահամալիր - 200 գճճ թ/ Արտաշատի քաղաքային արտադր. կենտրոն - 200 գճճ ժ/ SPFA-ի ակունքներ և գրասենյակ - 655 գճճ SPFA-ի գրասենյակներ	ե/ 66720 զ/ 100180 է/ 133558 ը/ 257112 թ/ 200349 ժ/ 66790 ի/ 66790 լ/ 33390
11.	օրդակիլ General ASH12 LMACW	3	24	30	3 հատ	84305	
12.	գորման ասոբ Interplast PT 63-200	1	180	200	1հատ	877070	
13.	սպորտային ցանց (խաղահրապարակի)	2	144	144	910 մ ²	25182	
14.	պողպատե լար	2	90	90	700 գճճ	41278	
15.	ցանցի պլաստմասն օղ	2	18	18	4500 հատ	2934	
16.	սպորտային խաղերի ցանցեր	11	20	20	11 հատ	12591	
17.	բել	1	7	8	2934	2934	
	ԸՆԴԱՍՏՆԸ	551		27180		5080260	

Բեռի արժեքը իր մեջ ներառում է բեռի մաքսային արժեքը 6000 ԵՎԴԴ և բեռնափոխադրման ծախսը 5000 ԱՄՆ դոլար, որոնց դրամային արժեքը «Շիրակի» ՏՍՏ կողմից հաշվարկվել է ըստ կբ 11.05.2011թ. սահմանած փոխարժեքի /1ԵՎԴԴ=536.51դրամ, 1 ԱՄՆ դոլար=372.24դրամ/ և ըստ 12.05.2011թ. C 331 ԲԱՀ-ի բեռի արժեքը կազմել է 5080260 դրամ /ներառյալ բեռնափոխադրման ծախսը/:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

21.8/9.3

0010, Երևան, Մելիք-Աղայան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

8.06.11թ N 35,82/8004-11

Ձեր N° _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահի
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 02.06.2011թ. N15/15.4/9083-11 գրությամբ ներկայացված «Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության Գյումրու մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում ենք նախագծին կից բեռների բաշխման ցանկում նշել նաև դրանում ընդգրկված շահառուներին հատկացվող բեռների համապատասխան արժեքները:

Նշենք նաև, որ բեռի բաշխման ցուցակում ընդգրկված կոնկրետ շահառուների և նրանց որոշ մասի կողմից գրությանը կից ներկայացված դիմումների առկայության դեպքում մեկնաբանված չէ «Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության Գյումրու մասնաճյուղի գրասենյակներին և ակումբներին բեռների մի մասի հատկացման նպատակը:

Միաժամանակ առաջարկում ենք որոշման նախագծի 3-րդ կետում ներառել նաև ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

N034/17338-11
8.06.11թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

21.8/9.3

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

02.06.11 N 35,82/5004-11

Ձեր N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 02.06.2011թ. թիվ 15/15.4/9083-11 գրության կապակցությամբ «Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության Գյումրու մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Հ. ԲՈՒՇԿՅԱՆ

020/17229-11
07.06.11թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՁԸ-Ց/Գ.3

« 6 » 06 2011 թ.

N 88/2480-5/4856-11

Ձեք 2011-06-02, 15/15.4/9083-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Ֆրանսիայի բողոքական
եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական
կազմակերպության Գյումրու մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման
ծրագրի մասին» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ
ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքներով՝

Տ. Քերիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER

ՁԸ-Ց/Գ.3

0010, Երևան, Գլխավոր պորտալ, կառավարական տուն 3, Հեռ./Տեղ./Tel.: 58 03 02, ֆաքս/ֆաքս/ֆաքս (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07-1/5925-11 6.06.2011

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի հունիսի 2-ի № 15/15.4/9083-11 գրության՝
հայտնում եմ, «Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև
համերաշխություն» բարեգործական կազմակերպության Գյումրու մասնաճյուղի հասցեով
ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ
կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ
չունի:

Հարգանքով՝

Վ.Սահակյան

Կառարող՝ Միջազգային կապերի բաժին
հեռ.563-791

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 http://www.mss.am

N 040/17032-11
6.06.11

Կար. Ն.Սահակյան
հեռ. 524777

N 031/17089-11
6.06.11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Ձ. 8/9.3

<< 07 >> 06 2011թ.

ք. Գյումրի, Գ. Նժդեհի 16

№: 01/2664-1

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

« ՀԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՇՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր՝ 06.06.2011թ.

թիվ՝ 15/15.4/9083-11

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

« Հ Շիրակի մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության Գյումրու մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագիծը:

Ձեռք առարկում ծրագիրը որակել բարեգործական:

Հարգանքով՝

Ա. ԳԻԶԻՐՅԱՆ

Հ. Արշակյան
/0312/3-16-26

Ն 116/47161-11
7.06.11թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

МАРЗПԵՏ ԱՐԱՐԱՏԱ

Ձ. 8/9.3

ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փ./60
Հեռ. /0235/ 2-52-16, /010/ 28-60-23

№ 4/34-1/2518-11 9 06 2010թ.

Ձեր թիվ՝ 15/15.4/9083-11

« Հ ԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

02.06.2011թ.

« Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ,, Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության Գյումրու մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրերի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնվում է, որ առաջարկվում է ծրագիրը ճանաչել բարեգործական:

ՄԱՐԶՊԵՏ՝

Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Կատ. Գ. Եղիազարյանն
Հեռ./0253/2-05-77

Ն 111/47578-11
9.06.11թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ *Ձ. 8/9 3*

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

*N 2426/3-6/3770-11
8.06.11թ.*

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Սույն թվականի հունիսի 2-ի թիվ 15/15.4/9083-11 գրությամբ Ձեր կողմից
կարծիքի ներկայացված «Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի
միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության Գյումրու
մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման
նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. ԱՂԱՎԵՐԴՅԱՆ

Կարարող Մ. Շահնազարյան
Միջազգային հարաբերությունների բաժին, հեռ.՝ 594 649

*N 044/17440-11
8.06.11թ.*



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՏԵՂԱԿԱԼ *Ձ. 8/9.3*

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ *02/34-17691-Կ*

«10» 06 2011 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան


Ի պատասխան Ձեր 02.06.2011թ. հ. 15/15.4/9083-11 գրության՝
տեղեկացնում եմ, որ Երևանի քաղաքապետարանում քննարկվել է
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և
Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության
Գյումրու մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին»
որոշման նախագիծը, որի վերաբերյալ դիտողություններ և
առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Կ. ԱՂԵՅԱՆ

Կառ. Ռ. Զաքարյան
հեռ. 51 41 79

1208



«Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության Գյումրու մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Գիտատվության կամ առաջարկության բովանդակությունը	Հրմնավորում
<p>ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ</p> <p>Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում են նախագծին կից բեռների բաշխման ցանկում նշել նաև դրանում ընդգրկված շահառուներին հատկացվող բեռների համապատասխան արժեքները:</p> <p>Նշում են նաև, որ բեռի բաշխման ցուցակում ընդգրկված կոնկրետ շահառուների և նրանց որոշ մասի կողմից գրությանը կից ներկայացված դիմումների առկայության դեպքում մեկնաբանված չէ «Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության Գյումրու մասնաճյուղի գրասենյակներին և ակումբներին բեռների մի մասի հատկացման նպատակը:</p> <p>Միաժամանակ առաջարկում են որոշման նախագծի 3-րդ կետում ներառել նաև ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը:</p>	<p>Որոշման նախագիծը խմբագրվել է: Կազմակերպությունը ներկայացրել է պարզաբանում և բեռի ցանկի ուղղված տարբերակը:</p> <p style="text-align: right;">Մ. 8/9.3</p>

14/06/2011 թ.

ՀՀ ֆինանսների նախարարություն
 նախարարի տնօրենի գլխավոր գանձապետ
 պարոն Ատոմ Չանգուդազյանին

պատճեն՝
 ՀՀ կառավարության բարեգործական
 ծրագրերի համակարգման հանձնաժողովի
 նախագահ պարոն Ս. Տեր-Մինոնյանին

Մ. 8/9.3

Հարգելի պարոն Չանգուդազյան,

Ի պատասխան Ձեր՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ուղղված 08.06.2011թվականի թիվ 3/3,8-2/80014-11 գրության Ձեզ ներ ներկայացնում մեր կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծին կից բեռների բաշխման ցանկի վերափոխված տարբերակը, որտեղ ընդգրկված են շահառուներին հատկացվող բեռների համապատասխան արժեքները:

Տեղեկացնում ենք նաև, որ բեռների մի մասը վերանորոգման աշխատանքներ իրականացնելու նպատակով հատկացվում է մեր կազմակերպության հայաստանյան գրասենյակներին, որտեղ իրականացվում են կազմակերպության հիմնական սոցիալական և գարգացման ծրագրերը և ակումբներին, որտեղ ծավալվում են կազմակերպության կրթական և մշակութային երիտասարդական ծրագրերը:

Հարգանքներով՝

«Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և
 Հայաստանի միջև համերաշխություն»
 ԲԿ Գյումրու մասնաճյուղի ղեկավար

(Signature)
 Արամ Խաչատրյան

ՀՀ ԿՐԻՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ
 094/18083
 14.06.11

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2011 թվականի N Մ-
քաղ. երևան

-Ա *ՁԲ.8/9.4*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունիսի -ի N 3/3.8-2/ -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-6/3 -11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**.

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից «Էֆնետ գրուպ» ընկերությունից ձեռք բերված պրեզենտացիոն սարքավորումը (878 կգ ընդհանուր քաշով, 34340.31 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ 1330 ԱՄՆ-ի դոլար բեռնափոխադրման ծախսերը, Արարատյան տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Մ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Ն - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

ՁԲ.8/9.4

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

10.06.11 №3/3.8-2/80/40-1/

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 08.06.2011թ. N15/15.1/9519-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուրազյան

Օրմե/17 703-11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ *ՁՄ 8/9.4*

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ՁԿ/3-6/3980-11
14.06.11

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Սույն թվականի հունիսի 8-ի թիվ 15/15.1/9519-11 գրությամբ Ձեր կողմից
կարծիքի ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 30.04.2010թ. թիվ Մ-262-Ա
որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին
(«Մատենադարան» հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ
չկան:

Ա. ԱՆՎԵՐԴՅԱՆ

ՁԿ/18054-11

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2011 թվականի N Մ-
բաղ. Երևան

-Ա *ՁՄ 8/9.5*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N2)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2011 թվականի հունիսի -ի N 3/3.8-2/ -11 և Հայաստանի
Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011
թվականի -ի N ԱԱ/3-6/3 -11 եզրակացությունները, որոշում է:

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից «TLS Communication»
ընկերությունից ձեռք բերված պրեզենտացիոն սարքավորումների ապրանքները (2 տեղ, 31
կգ ընդհանուր բաշտով, 1855 եվրո արժողությամբ, ներառյալ 400 եվրո բեռնափոխադրման
ծախսերը, «Չվարթոնգ» ՍՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյան բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի
30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ
փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության
նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 21.8/9.5

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ՍԿ/38/3959-11

13.06.11

**ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հունիսի 10-ի համար 15/15.1/9735-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱՆՎԵՐԴՅԱՆ

ՍԿ/17955-11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

21.8/9.5

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

14.06.11 № 3/38-2/80232-11

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 10.06.2011թ. N15/15.1/9735-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանչուղայան

ՍԿ/18063-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

----- 2011 թվականի N Մ- -Ա
քաղ. Երևան

21.8/9.6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի ՈՒ Մ Մ-489-Ա ՈՐՈՇՄԱՍԻ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԵՐՁԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Լայթհաուս-Փարոս» բարե-
գործական հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
